ՀՏԴ 930

Թուկուլտի-Նինուրտա I-ի պատերազմը Բաբելոնիայի դեմ

Ռուսլան Յականյան

Հանգուցային բառեր. *Ասորեստան, Աշշուր, Բաբելոնիա, Բաբելոն, Կաշտիլիաշ IV, Կարդունիաշ, Աքքադ, Միջագետք*

Նախաբան

Մ. թ. ա. XIII դարի Միջագետքի քաղաքական պատմության առանցքային դրվագներից է Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի պատերազմը Բաբելոնիայի արքա Կաշտիլիաշ IV-ի դեմ: Նրա դրվագներն արտացոլված են Ասորեստանի արքայական արձանագրություններում, վարչատնտեսական բնույթի նյութերում, ասսուրա-բաբելական ժամանակագրություններում և այլուր: Պատերազմի հիմնական պատճառը նույն լեզվամշակութային տարածքին պատկանող երկու ազգակից պետությունների՝ Ասորեստանի ու Բաբելոնիայի միջև չկարգավորված փոխհարաբերությունների թնջուկն էր: Չնայած այն հանգամանքին, որ Բաբելոնիան մշակութային առումով արդեն կլանել էր Ասորեստանը, քաղաքական դիմակայության պարագայում Բաբելոնիան ստիպված էր պաշտպանել իր անկախությունը Ասորեստանից: Մ. թ. ա. XIII դարում «բաբելական խնդրին» առանցքային տեղ հատկացվեց Ասորեստանի արտաքին քաղաքականության բնագավառում: Թեև դրա կարգավորումը հանգեցրեց Բաբելոնիայի կասսիտական արքայատոհմի ժամանակավոր անկմանը, այնուամենայնիվ, Բաբելոնիան վերջնականապես հպատակեցնելու Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ. թ. ա. 1244-1208 թթ.) ջանքերը հաջողությամբ չպսակվեցին:

1. Պատմական ետնախորքը

Մ. թ. ա. XIV-XIII դարերը նշանավորվեցին Աշշուր քաղաք-պետության բարձրացմամբ և Միջին ասորեստանյան պետության առաջացմամբ: Նորաստեղծ ու ամբողջապես ռազմականացված պետությունը սկսեց հավակնել տարածաշրջանային գերիշխանության: Այս ժամանակահատվածում Ասորեստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հյուսիսից արևմուտք ձգվող և խեթերի կողմից վերահսկվող «կիսալուսնի» ճեղքումն էր, որը թույլ կտար ճանապարհ հարթել դեպի

հյուսիսի մետաղների աղբյուրները և արևմուտքի առևտրական ուղիներն ու կենտրոնները[1]: Այդ նպատակին տանող ճանապարհին ասսորեստանյան արքաներ Ադադ-նիրարի I-ի (մ.թ.ա.1307-1275թթ. (±10)[2] և մասնավորապես Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) I-ի (մ.թ. ա.1274-1245թթ.) հարվածների տակ ընկավ Միտաննիի պետությունը: Շուլմանու-աշարեդ I-ին փոխարինած Թուկուլտի-Նինուրտա I-ն իր գահակալման (մ. թ. ա. 1244-1208 թթ.)[3] առաջին իսկ տարիներին մեծ ջանքեր գործադրեց իր նախորդների նվաճումներն ամրագրելու և ընդլայնելու համար: Այդ նպատակով Թուկուլտի-Նինուրտա I-ը գրեթե ամեն տարի ասորեստանյան բանակն արշավանքի էր առաջնորդում դեպի աշխարհագրական այս կամ այն ուղղությունը: Նա ներխուժել է նաև Հայկական լեռնաշխարհ, որտեղ բախվել է Նաիրյան ցեղային միության հետ, որից հետո իր տիտղոսաշարին ավելացրել է «**šar kullat mātāt Nairi**»՝ «*Նաիրյան բոլոր*

---

[1] Տե՛ս Ցականյան Ռ., Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (այժմ՝ Բանբեր արևելագիտության ինստիտուտի), 2018, № XXXI, Երևան, էջ 19-28: Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 13: Քոսյան Ա., Ասորեստանը Ք. ա. XIV-IX դդ. // Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 1: Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 2013, էջ 64-67: Cancik-Kirschbaum E., The Middle Assyrian Domination of North-East Syria: The Written Sources // Archéologie et Histoire de la Syrie I, Schriften zur Vorderasiatischen Archäologie, Herausgegeben von Winfried Orthmann und Jan-Waalke Meyer Band 1,1, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2013, էջ 453-455: Cifola B., The Titles of Tukulti-Ninurta I // in: Frame, G. (ed.), From the Upper Sea to the Lower Sea, Studies on the History of Assyria and Babylonia in Honour of A.K. Grayson, 2004, Leiden, էջ 7-16: Kuhrt A., The Ancient Near East էջ 3000-330 BC, Vol. I, London-New York, 1995, էջ 348-355:

[2] Միջինասորեստանյան դարաշրջանի ժամանակագրության վերաբերյալ մանրամասը տե՛ս Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte, Berlin, 1991, էջ 188-189: Wilhelm G., Boese J. 1987, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderts v. Chr.// In: P. Åström (ed.), High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology held at the University of Gothenburg 20th-22nd August 1987, Part 1, Gothenburg, էջ 74-117:

[3] Տե՛ս Streck M. P., Tukultī-Ninurta I // Realexkion der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Band 14, 1/2-3/4, 2014, Berlin-Boston, էջ 176-178: Baker H. D., Tukulti-Inūrta // The Prosopography of the Neo-Assyrian Empire, ed. by H. D. Baker, vol. 3, part II, Š-Z, 2011, Helsinki, էջ 1332-1333:

երկրների արքա» տիտղոսը[4]: Թուկուլտի-Նինուրտա I-ն առաջին արքաներից էր, որ ընդունեց «**šar šarrāni**»՝ «*արքաների արքա*» և «**bēl bēlē**»՝ «*տերերի տեր*» տիտղոսները:

Թուկուլտի-Նինուրտա I-ը բավականին համառ ու արյունալի մարտեր մղեց խեթական Թուդխալիաս IV (մ. թ. ա. մոտ 1246-1230 թթ.) արքայի դեմ՝ Հյուսիսային Սիրիայի ու Փոքր Ասիայի արևելյան տարածքների նվաճման համար: Այդ պայքարը հօգուտ Ասորեստանի հանգուցալուծելուց հետո Թուկուլտի-Նինուրտա I-ը ձեռնամուխ եղավ Բաբելոնիայի կասսիտական արքա Կաշտիլիաշ IV-ի (մ. թ. ա. մոտ 1232-1225 թթ.) դեմ արշավանքի իրագործմանը:

2. Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ Բաբելոնիայի դեմ պատերազմի պատճառները

Ընդունված կարծիքի համաձայն՝ Կասսիտական Բաբելոնիայի դեմ Ասորեստանի պատերազմի պատճառը եղել է այն, որ Բաբելոնիայի արքա Կաշտիլիաշ IV-ը, ելնելով հյուսիսային ու հյուսիսարևմտյան ուղղություններով Ասորեստանի զբաղվածության հանգամանքից, հարձակումներ էր գործել Ասորեստանի հարավային սահմանամերձ բնակավայրերի վրա: Խաթթիի մայրաքաղաք Խաթթուսասից հայտնաբերված մի պակասավոր աղբյուրի հաղորդման համաձայն՝ Ասորեստանի արքան մեղադրել է բաբելոնյան կողմին՝ արդարացնելով իր կողմից սանձազերծված պատերազմը[5]: Նույն տրամաբանությունն ենք տեսնում նաև Բաբելոնիայի դեմ Թուկուլտի-Նինուրտայի պատերազմի տպավորությունների հիմքի վրա հետագայում ստեղծված «Թուկուլտի-Նինուրտայի էպոս»-ում: Ըստ էպոսի՝ հակամարտությունը սկսվում է այն պատճառով, որ Կաշտիլիաշ IV-ը խախտում է արևի աստված Շամաշին տված երդումը, որից հետո բարկացած Էնլիլ աստվածը, թողնելով իր սրբավայրերը Նիպուրում և Դուր-Կուրիգալզուում, հանձնարարում է Թուկուլտի-Նինուրտային վրեժ լուծել աստվածներին հասցված վիրավորանքի համար: Բաբելացի վաճառականները (գուցե լրտեսները) ձերբակալվում են Ասորեստանում, սակայն Թուկուլտի-Նինուրտան ազատ է արձակում նրանց՝ ի նշան բարի կամքի դրսևորման: Այս ամենից հետո նա նամակ է

[4] Տե՛ս Grayson A. K., The Assyrian Rulers of the Third and Second Millennium B. C. (To 1115 B.C.), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, Toronto, 1988, A.0.78.5, ll, էջ 8-9:

[5] Տե՛ս Beaulieu P. A., A History of Babylon, 2200 BC–AD 75, Blackwell History of the Ancient World, Wiley-Blackwell, John Wiley & Sons Ltd, 2018, էջ 147-148:

գրում Կաշտիլիաշ IV-ին՝ նրան մեղադրելով պայմանագրի խախտման համար: Բաբելոնիայի արքան դրան պատասխանում է լկտիաբար. նա հրամայում է բանտարկել ասորեստանյան սուրհանդակներին և պատերազմով սպառնում է Թուկուլտի-Նինուրտային: Փոխադարձ սպառնալիքներով ու մեղադրանքներով նամակների փոխանակումից հետո Թուկուլտի-Նինուրտան ներխուժում է Բաբելոնիայի տարածք՝ նվաճելով ու թալանի ենթարկելով այն[6]:

3. Թուկուլտի-Նինուրտա I-ի առաջին արշավանքը և Բաբելոնի գրավումը

Բացի «Թուկուլտի-Նինուրտայի էպոս»-ից ու խեթական վերոնշյալ աղբյուրից՝ Բաբելոնիայի դեմ արշավանքի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նաև իր՝ Թուկուլտի-Նինուրտայի թողած արձանագրությունները: Դրանցից մինչ օրս հայտնի են յոթը (RIMA, I, A.0.78.6; A.0.78.23; A.0.78.24, ll. 34-40; A.0.78.25: rev. 1-8; A.0.78.28), որոնց տեքստերը գրեթե չեն տարբերվում միմյանցից: Այդ իսկ պատճառով կանդրադառնանք արքայի ընդարձակ տարեգրության միայն այն տողերին, որոնք անմիջականորեն վերաբերում են հետազոտության խնդրին:

Այսպես՝ իր կառավարման 13-րդ տարվա (Էտել-պի-Աշշուրի էպոնիմատի տարի)[7] վերաբերյալ Թուկուլտի-Նինուրտա I-ը հայտնում է՝

«48. *i-na* GIŠ.tukul-*ti šá* ^{d}*Aš-šur*
49. ^{d}BAD *ù* ^{d}*Šá-maš* DINGIR.MEŠ GAL.MEŠ
50. EN.MEŠ-*iai-na re-ṣu-ti*
51. *šá* ^{d}*Iš-tár* NIN-*at* AN-[e] KI-*ti*
52. *i-na pa-ni um-ma-n[í]-ia*
53. *il-li-ku it-ti*
54. ^{m}*Kaš-til-a-šu* MAN KUR*Kar-du-ni-aš*
55. *a-na e-peš tuq-ma-ti*
56. *as-niq a-bi-ik-tu*
57. *um-ma-na-te-šu aš-ku-un*
58. *muq-tab-li-šu tí-še-em-qít*
59. *i-na qé-reb tam-ha-ri šá-a-tu*
60. ^{m}*Kaš-til-a-šu* MAN *kaš-ši-i*

---

[6] Տե՛ս Machinist P. B., The Epic of Tukulti-Ninurta I: a Study in Middle Assyrian Literature, Yale University, unpublished PhD Dissertation, 1978, էջ 60-139: Machinist P., Literature as Politics: The Tukulti-Ninurta Epic and the Bible // Catholic Biblical Quarterly, Vol. 38, No. 4, 1976, էջ 455-482:

[7] Տե՛ս Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte, էջ 44, 51-52, 58-59, 136:

61. *qa-tì ik-šud* GÚ*be-lu-ti-šú*
62. *ki-ma gal-tap-pi i-na* GÌR.MEŠ-*ia*
63. *ak-bu-us šal-lu-su*
64. *ù ka-mu-su a-na ma-ḫar Aš-šur*
65. EN-*ia ú-bi-la* KUR *Šu-me-ri*
66. *ù ak-ka-di-i a-na* ZAG *gim-ri-šá*
67. *a-bél i-na* A.AB.BA KI.TA
68. *šá ṣi-i* ^{d}UTU-*šimi-ṣir*
69. KUR-*iaaš-ku-un*»

«48-69. *Աշշուր, Էնլիլ և Շամաշ աստվածների աջակցությամբ, մեծ աստվածների, իմ տիրակալների, (և) Իշթար աստվածուհու աջակցությամբ՝ երկնքի (և) անդրաշխարհի տիրուհու, (որը) քայլում է իմ բանակի առջևում, ես մոտեցա Կարդունիաշի արքա Կաշտիլիաշին՝ մարտ վարելու համար: Ես պարտության մատնեցի նրա բանակը (և) տապալեցի նրա մարտիկներին: Այդ ճակատամարտի ընթացքում ես գերեցի կասսիտների արքա Կաշտիլիաշին, (և) ոտքերս դրեցի նրա տիրակալ պարանոցին, կարծես այն ոտնահարթակ լիներ: Ես նրան շղթայված՝ որպես գերի, բերեցի իմ տիրոջ՝ Աշշուրի առջև: (Այսպիսով) ես դարձա Շումերի և Աքքադի տերն ամբողջությամբ (և) ամրագրեցի իմ երկրի սահմանը մինչև Ստորին ծովը արևելքում*»[8]:

«Թուկուլտի-Նինուրտայի էպոս»-ի տվյալների հետ Թուկուլտի-Նինուրտա I-ի տարեգրության վերոնշյալ տեղեկությունների համադրությունից հասկանալի է դառնում, որ Բաբելոնիայի և Ասորեստանի միջև պատերազմը սկսվել է ոչ թե Էտել-պի-Աշշուրի էպոնիմատի տարում (Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 13-րդ տարի), այլ դրանից առաջ: Երկու աղբյուրներն էլ ըստ էության 312 նկարագրում են նախընթաց ժամանակահատվածում Բաբելոնիայի արքա Կաշտիլիաշ IV-ի՝ նախահարձակ գործողություններին ի պատասխան Թուկուլտի-Նինուրտա I-ի ձեռնարկած արշավանքն ու ասսուրա-բաբելոնյան զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտը:

Վերջինիս մասին «*Համաժամանակյա պատմություն*» ժամանակագրության մեջ նշված է հետևյալը.

«(Col. II) (C)1.[^{I}Tukul-ti-^{D}MAŠ šar$_4$ KUR.Ašs-šur] ^{I}Kaš- [til]-a-šú šar$_4$ KUR.Kar-an-dun-ía-[àš]

2. [. . .] . . . i-na qí-rib tam-ḫa-z[i]

3. . . .] . . . [. . .]

---

[8] Grayson A. K., The Assyrian Rulers of the Third and Second Millennium B. C., A.0.78.5.

«*[Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտան] (և) Կարանունի[աշ]-ի արքա Կաշտ[տիլ]իաշը [. . .] . . . բաց ճակատամարտում*»[9]:

Մեկ այլ արձանագրության մեջ Ասորեստանի արքան հայտնում է.

«(. . .) 1. [. . .] BI IŠ [. . .

2. . .] [I]Tukul-ti-[D]MAŠ [MAN KIŠI MAN dan-nu MAN KUR.Ašs-šur (. ?.)

3. NUN E]N gim-ri ša GÁL [. . .

4. . . .] KUR Kar-dun-ía-àš iṣ-bat-an-[. . .]

5. ub-la-an-ni i-na URU.ŠÁ.URU [. . .]

6. ú-ša-am-ši ú-šu-ni-iš [. . .]

7. ša KUR.Kar-dun-ía-àš a-na [. . .]

8. a-na ḪUL [I]Kaš-til-a-šu [. . .]»,

«*(1-8.) [. . .] (Ես) Թուկուլտի-Նինուրտաս, [արքա ամբողջության, հզոր արքա, Ասորեստանի արքա (. ?.), արքայազն, տիր]ակալը բոլորի . . . [. . .] վերցրի Կարդունիաշը [. . .] Լիբբի-ալիից*[10] *բերված [. . . Կաշտիլիաշը, արքան] Կարդունիաշի, [շարժվեց], դեպի [. . .] չարության համար: Կաշտիլիաշը [. . .]*»[11]:

Այսպիսով՝ թեև աղբյուրները չեն հստակեցնում, թե որտեղ է տեղի ունեցել ասսուրա-բաբելոնյան զորքերի վճռական բախումը, բայց միանշանակ փաստում են, որ այն ավարտվել է բաբելոնյան զորքերի պարտությամբ և Կաշտիլիաշ IV-ի գերեվարությամբ: Հաղթանակից հետո ասորեստանյան բանակը պատժիչ գործողություններ է իրականացրել Բաբելոնիայում: Թուկուլտի-Նինուրտա I-ի տարեգրությունը հաղորդում է, որ Էտել-պի-Աշշուրի էպոնիմատի տարում ասորեստանցիները տեղահանել և ամենայն հավանականությամբ Կար-Թուկուլտի-Նինուրտայում վերաբնակեցրել են շուրջ 14.000 մարդու[12]:

Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ Բաբելոնիայի դեմ պատերազմի վերաբերյալ VAT 17999 փաստաթղթում, որը նույնպես թվագրված է Կուրբանուի որդի Էտել-պի-Աշշուրի համանուն տարով, նշվում է Կար-Թուկուլտա-Նինուրտա քաղաքում բաբելացի գերիներին տրվող ամսա-

---

[9] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, № 21; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 10.

[10] Լիբբի-ալի էր կոչվում Աշշուրի, այսպես կոչված, ներքին քաղաքը (Cancik-Kirschbaum E., [URU]ŠÀ, māt Aššur und die Binnenstruktur des mittelassyrischen Reiches // Berliner Beiträge zum Vorderen Orient, Band 24, Pewe-Verlag, 2014, S. 302-304):

[11] Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 13.

[12] Տե՛ս Yamada S., Tukulti-Ninurta I's Rule over Babylonia and Its Aftermath // Orient, № 38, 2003, Tokyo, էջ 161: Freydank H., Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte I, 1, col. I, ll, էջ 43-46; col. IV, ll, էջ 24-25:

կան հացահատիկի ու օրապահիկի չափաբաժինը[13]: Մեկ այլ փաստաթղթից, որտեղ նույպես խոսվում է բաբելացի գերիներին օրապահիկ տալու մասին, իմանում ենք նաև, որ Թուկուլտի-Նինուրտա I-ը դեպի Բաբելոնիա կատարել է առնվազն երկու արշավանք.

«11. ŠE an-ni-ú
12. a-na ŠUK ÉRIN.MEŠ
13. Kaš-ši-e 14. ḫu-ub-te
15. ša KUR,Kar-du-ni-áš
16. ša 2 ḫar-ra-na-te
17. ta-din»

«11-17. *Այս գարին տրվել է երկու արշավներից (երկու արշավանքների շնորհիվ-ծ.հ.) Բաբելոնիայից գերի ընկած կասսիտների չափաբաժնի համար*»[14]:

Ցավոք, սկզբնաղբյուրների սակավ տեղեկությունները հնարավորություն չեն տալիս որոշակիացնելու, թե երբ է կատարվել Բաբելոնիայի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի երկրորդ արշավանքը: Հնարավոր է, որ Թուկուլտի-Նինուրտա I-ն այն ձեռնարկել է Ասորեստան վերադառնալուց որոշ ժամանակ հետո: Սակայն չի բացառվում, որ «երկրորդ արշավանք» արտահայտության տակ նկատի է առնվել Կաշտիլիաշ IV-ի պարտությունից ու գերեվարությունից հետո հաղթանակած և բարոյապես ամրապնդված ասորեստանյան զորքի գրոհը մայրաքաղաք Բաբելոնի վրա: Փոխարենը *«Բաբելոնյան ժամանակագրություն»-ը* բավականին մանրամասն է նկարագրում ասորեստանյան զորքի կողմից Բաբելոնի գրավումը.

« Col. IV, 1. [. . .] . . . [. . .]
2. [. . .] ḪAR AN.BAR *id-di-ma*(?) . . . [. . .]
3. [. . . ^{I}*Tukul-t*]*i*-^{D}MAŠ *a-na* TIN.TIR.KI *i-tu-ra-am-ma*
4. [. . .] . . . [. . . *ú*]-*qar-ri-bu* BÀD TIN.TIR.KI *iq-qur* KUR TIN.TIR.KI *ina* GIŠ.TUKUL
5. [*ú-šam-q*]*it* NÌ.GA É-*sag-gíl u* TIN.TIR.KI *ina šál-lat uš-te-ṣi* ^{D}EN GAL^{úD}AMAR.UTU
6. [*ina šu*]*b-ti-šú id-ke-e-ma a-na* KUR.*Aš-šur*.KI*ú-šá*(!)-*aṣ-bit ḫar-ra-an* ^{LÚ}*šak-nu-ti-šú*

---

[13] Տե՛ս Freydank H., Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte I, 1, I, ll, էջ 43-46: Նույնի՝ Zwei Verpflegungstexte aus Kār-Tukultī-Ninurta // Altorientalische Forschungen, № 1, 1974, էջ 55-79:

[14] Ebeling E., Keilschrifttexte aus Assur juristischen Inhalts (WVDOG 50), Leipzig, 1927, № 103.

7. ina KUR.*Kar-an-dun-ía-àš iš-kun* 7 MU^{MEŠI}*Tukul-ti-*^{D}MAŠ *Kar-an-dun-ía-àš*

8. ú-ma-'-ir EGIR LÚ.GAL.MEŠ *šá* KUR.UR.IKI*šá* KUR.*Kar-an-dun-ía-àš*BALA.MEŠ-*ma*

9. ^{ID}IŠKUR.MU.ÙRI *ina* GIŠ.GU.ZA AD-*šú ú-še-ši-bu* ^{I}TUKUL-*ti-*^{D}MAŠ *šá ana* TIN.TIR.KI *ana* ḪUL^{tú}

10. [ŠU]II *ú-bil-lu* ^{I}AN.ŠÁR-*na-ṣir*-A DUMU-*šú u* LÚ.GAL.MEŠ *šá* KUR.*Aš-šur*.KI BALA.MEŠ-*šu-ma*

«1-10. *[. . .] նա գցեց (?) երկաթե շղթաները և [. . . Թուկուլտի-Նինուրտան (I) վերադարձավ Բաբելոն և [. . .] հավաքեց [. . .]: Նա կոտրեց Բաբելոնի պատը, ջախջախեց բաբելոնացիներին: Ավարի մեջ նա տարավ նաև Էսագիլայի ու Բաբելոնի հարստությունները: Նա հանեց մեծ տեր Մարդուկին [իր] բնակավայրից և ստիպեց նրան մեկնել Ասորեստան: Նա Կարանդունիաշում նշանակեց իր նահանգապետին: Յոթ տարի Թուկուլտի-Նինուրտան իշխեց Կարանդունիաշում:*

Բաբելոնի գրավման մասին *Ուռլկերի* հայտնի ժամանակագրության վկայությունը անհամեմատ սեղմ է.

«1. [^{I}Tukul-ti-^{D}MAŠ šàr KUR.Ašs-šur KI TIN.TIR.KI u Sip]-par DIB-ma KUR Kar-an-dun-ía-àš ú-ma-a-a-er»

«[Ասորեստանի արքա Թուլուտի-նինուրտան նվաճեց Բաբելոնիան ու Սիպ]պարը և իշխեց»[15]:

4. Բաբելոնիայի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի պատերազմի հետագա ընթացքն ու արդյունքները

Բաբելոնի գրավումը և արքայական պալատի թալանը ժամանակակիցների կողմից պետք է գնահատվեին որպես պատերազմի բնականոն հետևանքներ: Սակայն Բաբելոնի տաճարների թալանը և բաբելոնյան աստվածների «տեղահանությունն ու վտարումը երկրից» արտառոց իրադարձություններ՝ սրբապղծություններ էին: Այդ պատճառով էլ «Թուկուլտի-Նինուրտայի էպոս»-ում իրադարձությունների պատճառահետևանքային հարաբերությունները կառուցված են այնպես, որ Ասորեստանի արքայի վրայից մաքրեն սրբապղծության մեղքը. ա) Ասորեստանի արքան անվեհեր է, մինչդեռ կասսիտները նենգ ու ամբարիշտ են, բ) կասսիտների արքան ներկայանում է որպես կառավարմանն անպատրաստ տիրակալ, մեղք է գործում Ասորեստանի և Շամաշ աստծո (որին վերապահված էր հետևելու երկու երկրների միջև գոյություն ունեցած պայմանագրերի

[15] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, № 25; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 46.

դրույթների կատարմանը) դեմ, բ) կասսիտների արքայի գործած մեղքի պատճառով աստվածները լքում են Բաբելոնը, և քաղաքն ու նրա տաճարները հայտնվում են աստված ների հովանավորությունից ու պաշտպանությունից դուրս, գ) Ասորեստանի արքան բոլոր փորձություններից դուրս է գալիս անվնաս: Դրանից հասկանալի է դառնում, որ Բաբելոնի տաճարների թալանը նրա դեմ չի հարուցել աստվածների բարկությունն ու վրեժը, հետևաբար գործողությունները եղել են օրինական[16]:

Բաբելոնիայի նվաճումը, հիրավի, խոշոր հաջողություն էր, ուստի դրանից հետո Թուկուլտի-Նինուրտա I-ն իր տիտղոսաշարին ավելացնում է նաև «**šar Sippar u Bābili**»՝ «*Միպպարի և Բաբելոնի արքա*», և «**šar māt Šumeri u Akkadî**»՝ «*Շումերի և Աքքադի արքա*» տիտղոսները[17]:

Թուկուլտի-Նինուրտա I-ը Բաբելոնում գահ է բարձրացնում Էլիլ-նադին-շումիին (մ. թ. ա. 1224-1223 թթ.): Ինչպես երևում է, Էլիլ-նադին-շումիի իշխանությունը ամբողջ Բաբելոնիայի վրա չի տարածվել, քանի որ նույն այս ժամանակ Բաբելոնիայի հարավում իրեն արքա է հռչակում Կադաշման-Խարբեն, որի իշխանությունը ճանաչում է Ուր քաղաքը[18]: Վերջինս ընդգծված հակաասորեստանյան դիրքորոշում ուներ և անմիջապես ռազմական գործողություններ սկսեց Ասորեստանի դեմ:

Մեկ տարի անց Բաբելոնիայի ասորեստանյան դրածո Էլիլ-նադին-շումին գահընկեց է արվում: Ըստ «*Բաբելոնյան ժամանակագրության*» (սյուն IV, տող 14-22) տվյալների՝ Էլամի արքա Կիդին-Հուտրուդիշ III-ը[19] (արձանագրության մեջ՝ Կիդին-Խուտրա) հարձակվում է Բաբելոնիայի վրա և գահ բարձրացնում Կադաշման-Խարբե III-ին (մ. թ. ա. 1223/1222 թ.): Թուկուլտի-Նինուրտա I-ի պատասխան արշավանքն իրեն երկար սպասել չտվեց, և քիչ անց Բաբելոնի պարիսպների տակ հայտնվեցին

---

[16] Տե՛ս Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Writings from the Ancient World, Society of Biblical Literature, Atlanta, 2004, էջ 90:

[17] Մանրամասն տե՛ս Sazonov V., Die mittalassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukūltī-Ninūrtas I (1242-1206) // in Identites and Societies in the Ancient East-Mediterranean Regions, Ed. by T. R. Kämmerer, Alter Orient und Altes Testament, 2011, Band 390/1, էջ 235-276; RIMA, I, A.0.78.3, l. 3:

[18] Տե՛ս Llop-Raduà J., The Boundary Between Assyria and Babylonia in the East Tigris Region During the Reign of Tukultī-Ninurta I (1233-1197 BC) // Between the Cultures the Central Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC, Conference at Heidelberg January 22nd-24th, 2009 edited by P. A. Miglus & S. Mühl, Heidelberger Studien zum Alten Orient, Band 14, 2011, էջ 211-215:

[19] Տե՛ս Potts D. T., The Archaeology of Elam. Formation and Transformation of an Ancient Iranian State, Cambridge University Press, Cambridge, 1999, էջ 231:

Ասորեստանի բանակները: Վերստին գրավելով Բաբելոնը՝ Թուկուլտի-Նինուրտա I-ն այստեղ գահ բարձրացրեց Ադադ-շումա-իդդինային (մ. թ. ա. 1222-1217 թթ.)[20]: Փաստորեն դա Թուկուլտի-Նինուրտա I-ի երրորդ արշավանքն էր Բաբելոնիայի դեմ: Ըստ MARV VIII 7-ի՝ Թուկուլտի-Նինուրտա I-ն իր կառավարման 16-րդ տարում (Աշշուր-զերա-իդդինայի էպոնիմատի տարում) վերադառնում է Բաբելոնից՝ Ասորեստանում կրոնական ծիսակատարությանը մասնակցելու համար[21]: Իր կառավարման 16-րդ տարում Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ Բաբելոնիայում գտնվելու շարժառիթներն այդքան էլ հստակ չեն: Աղբյուրների հատ ու կտոր վկայությունների համադրությունն ընդամենը հիմք է տալիս ենթադրելու, որ դա պայմանավորված է եղել էլամական արշավանքի հետևանքով Բաբելոնիայում տապալված ասորեստանյան գերիշխանությունը վերականգնելու անհրաժեշտությամբ:

Ինչպես երևում է, Բաբելոնիայի ասսուրական դրածո արքա Ադադ-շումա-իդդինայի իշխանությունը ոչ միայն չի տարածվել ողջ Բաբելոնիայի վրա, այլև ներքին աջակցություն չի ստացել: Շուտով նրա դեմ նույնպես բռնկվեց ապստամբություն, որի մասին «*Համաժամանակյա պատմություն*» ժամանակագրությունը հաղորդում է.

«*Ադադ-շումա-ուծուրն ապստամբություն բարձրացրեց և, օգտագործելով հավերժական աստվածային պաշտպանությունը, մտավ Բաբելոն, դարձավ երկրի տիրակալը և հաստատվեց իր թագավորական գահին*»[22]:

Նույն իրադարձությունը նկարագրված է նաև «Բաբելոնյան ժամանակագրության» մեջ.

«*Աքքադի (և) Կարանդունիաշի ազնվականների ապստամբությունից հետո հայրական գահին նստեցրեցին նրա (Կաշտիլիաշ IV-ի-ծ. հ.) որդուն՝ Ադադ-շումա-ուծուրին*»[23]:

Ապստամբության հետևանքով Բաբելոնիայի գահին հաստատված

---

[20] Տե՛ս Fuchs A., Das Osttigrisgebiet von Agum II. bis zu Darius I. (ca. 1500 bis 500 v. Chr.) // In: P. A. Miglus and S. Mühl (ed.), Between the Cultures: The Central Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC. Conference at Heidelberg, January 22nd–24th, 2009 (HSAO 14), Heidelberg: Heidelberger Orientverlag., 2011, էջ 251:

[21] Տե՛ս Freydank H., Feller B., Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte, VIII (WVDOG 119), Wiesbaden: Harrassowitz, 2007, № 7, 1-19: Ebeling E., Keilschrifttexte aus Assur juristischen Inhalts, № 103, էջ 1-19:

[22] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, 1975, № 21, Col. II, 3-7; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 10, Col. II, 3-7.

[23] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, 1975, № 22; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 45.

Ադադ-շումա-ուծուրի (մ. թ. ա. 1216-1187 թթ.)[24] իշխանությունն անմիջապես ճանաչվում է Նիպպուր քաղաքում:

Աղբյուրները Ադադ-շումա-ուծուրի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի կատարած ոչ մի արշավանք չեն արձանագրել: Դրանից հետևում է, որ Ադադ-շումա-ուծուրը շարունակել է գահակալել երկրի հարավում ընդհուպ Թուկուլտի-Նինուրտա I-ի մահը: Բաբելոնիայում ասորեստանյան գերիշխանության հերթական տապալման փաստի հանդեպ Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ նման անտարբերությունը բնավ չի ներդաշնակում նախորդած տարիներին այդ երկիրը հպատակեցնելու ուղղությամբ նրա ձեռնարկած ջանքերին: Ամենայն հավանականությամբ Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ նման վերաբերմունքը պայմանավորվել է Ասորեստանի ներքաղաքական կյանքում առաջացած խնդիրներով: Իր կառավարման վերջին տարիներին Թուկուլտի-Նինուրտա I-ը փորձում էր ուժեղացնել արքայական իշխանությունը՝ ի հաշիվ տոհմական ավագանու և քրմության հեղինակության: Նրանց ազդեցությունը թուլացնելու նպատակով նա նույնիսկ հեռացավ Աշշուրից քիչ հեռու՝ Տիգրիս գետի ձախ ափին իր կառուցած նոր մայրաքաղաք Կար-Թուկուլտի-Նինուրտա: Սակայն շատ չանցած՝ նա դավադրության զոհ գնաց, որի մասին *Բաբելոնյան ժամանակագրությունը* հաղորդում է հետևյալը.

«Col. IV, 11. [*ina*] GIŠ.GU.ZA-*šú id-ku-ssu-ma ina* URU.*Kar-Tukul-ti-*^{D}MAŠ *ina* É *i-si-ru-šu-ma ina* GIŠ.TUKUL GAZ.MEŠ-*šú*»

«Թուկուլտի-Նինուրտանյի դեմ, որը չարիքի նպատակով պարզել էր ձեռքերը Բաբելոնի վրա, Աշշուր-նածիր-ապալը[25]՝ *նրա որդին և Աշշուրի ազնվականները ապստամբեցին, գահընկեց արեցին, Կար-Թուկուլտի-Նինուրտա քաղաքում փակեցին իր տանը և զենքով սպանեցին նրան»*[26]:

Թուկուլտի-Նինուրտա I-ից հետո նրա որդիների սանձազերծած քաղաքացիական պատերազմի պատճառով Ասորեստանը կրկին

---

[24] Տե՛ս Munn-Rankin J. M., Assyrian Military Power 1300-1200 B.C. // The Cambridge Ancient History, vo. II, part. 2, Cambridge, 1975, էջ 284-294: Beaulieu P. A., A History of Babylon, 2200 BC–AD 75, էջ148-149:

[25] Ասորեստանյան արքայացանկերի բոլոր կրկնօրինակներում որպես Թուկուլտի-Նինուրտա I-ի հաջորդ հիշատակված է նրա որդի՝ Աշշուր-նադին-ապլին (մ. թ. ա. 1207-1204 թթ.), իսկ արձանագրության մեջ նրա անվան Աշշուր-նածիր-ապալն գրությունը, ըստ երևույթին գրչի սխալ է՝ Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte, S. 188.

[26] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, 1975, № 22; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, № 45.

ընկղմվեց քաղաքական խոր ճգնաժամի մեջ: Նման պայմաններում Բաբելոնիան հնարավորություն ստացավ ամրապնդելու իր վերականգնված անկախությունը:

Իբրև եզրակացություն

Բաբելոնիայի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի մղած պատերազմը միջինասորեստանյան պետության ծավալապաշտական քաղաքականության դրվագներից մեկն է, որը ասորեստանյան աղբյուրներում լուսաբանվել է միակողմանիորեն: Ասորեստանի համար պատերազմի պաշտոնական պատճառը եղել է Բաբելոնիայի արքայի՝ խաղաղության երդումը դրժելը և ասորեստանյան սահմանային շրջանների նկատմամբ նախահարձակ գործողությունները: Բայց Թուկուլտի-Նինուրտա I-ը դրանց հակադարձել է բավականին ուշ՝ Հյուսիսային Սիրիայի ու Փոքր Ասիայի արևելյան տարածքների նկատմամբ Ասորեստանի տիրապետությունն ամրագրելուց հետո:

Վճռական բախումը տեղի է ունեցել Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 13-րդ տարում և ավարտվել է ասորեստանցիների հաղթանակով ու Բաբելոնիայի արքա Կաշտիլիաշ IV-ի գերեվարությամբ: Բաբելոնի գրավումից հետո Թուկուլտի-Նինուրտա I-ը դրածո արքաների միջոցով փորձեց այն պահել իր գերիշխանության տակ: Սակայն վերջիններս կառավարել են միայն Բաբելոնիայի հյուսիսային մասում և ներքին աջակցություն չեն գտել տեղական ազնվականության և քրմության շրջանում: Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման վերջերին Բաբելոնիայի ազնվականության բարձրացրած հերթական ապստամբությունը Բաբելոնի գահին հաստատեց Կաշտիլիաշ IV-ի որդուն՝ Ադադ-շումա-ուծուրին, որով և ձախողվեց Բաբելոնիայի նվաճման նրա փորձը:

Գրականություն

1. Ցականյան Ռ., Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (այժմ՝ Բանբեր արևելագիտության ինստիտուտի), 2018, № XXXI, Երևան, էջ 19-33:
2. Քոսյան Ա., Ասորեստանը Ք. ա. XIV-IX դդ. // Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 1: Հին շրջան, պատ. խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 2013, էջ 64-79:
3. Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:
4. Baker H. D., Tukulti-Inūrta // The Prosopography of the Neo-Assyrian Empire, ed. by H. D. Baker, vol. 3, part II, Š-Z, 2011, Helsinki, pp. 1332-1333.
5. Beaulieu P. A., A History of Babylon, 2200 BC–AD 75, Blackwell History of the Ancient World, Wiley-Blackwell, John Wiley & Sons Ltd, 2018.
6. Cancik-Kirschbaum E., URUŠÀ, māt Aššur und die Binnenstruktur des mittelassyrischen Reiches // Berliner Beiträge zum Vorderen Orient, Band 24, Pewe-Verlag, 2014, S. 291-314.
7. Cancik-Kirschbaum E., The Middle Assyrian Domination of North-East Syria: The Written Sources // Archéologie et Histoire de la Syrie I, Schriften zur Vorderasiatischen Archäologie, Herausgegeben von Winfried Orthmann und Jan-Waalke Meyer Band 1,1, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2013, pp. 449-459.
8. Cifola B., The Titles of Tukulti-Ninurta I // in: Frame, G. (ed.), From the Upper Sea to the Lower Sea, Studies on the History of Assyria and Babylonia in Honour of A. K. Grayson, 2004, Leiden, pp. 7-16.
9. Ebeling E., Keilschrifttexte aus Assur juristischen Inhalts (WVDOG 50), Leipzig, 1927.
10. Freydank H., Zwei Verpflegungstexte aus Kār-Tukultī-Ninurta // Altorientalische Forschungen, № 1, 1974, 55-89.
11. Freydank H., Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte, Berlin, 1976.
12. Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte, Berlin, 1991.
13. Freydank H., Feller B., 2007 Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte, VIII (WVDOG 119), Wiesbaden: Harrassowitz, 2007.
14. Fuchs A., Das Osttigrisgebiet von Agum II. bis zu Darius I. (ca. 1500 bis 500 v. Chr.) // In: P. A. Miglus and S. Mühl (ed.), Between the Cultures: The Central

Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC. Conference at Heidelberg, January 22nd-24th, 2009 (HSAO 14), Heidelberg: Heidelberger Orientverlag., 2011, pp. 229-320.
15. Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Writings from the Ancient World, Society of Biblical Literature, Atlanta, 2004.
16. Grayson A. K., The Assyrian Rulers of the Third and Second Millennium B.C. (to 1115 B.C.), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods 1, Toronto, 1988.
17. Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, 1975,
18. Kuhrt A., The Ancient Near East c. 3000-330 BC, Vol. I, London-New York, 1995.
19. Llop-Raduà J., The Boundary Between Assyria and Babylonia in the East Tigris Region During the Reign of Tukultī-Ninurta I (1233–1197 BC) // Between the Cultures the Central Tigris Region from the 3rd to the 1st Millennium BC, Conference at Heidelberg January 22nd-24th, 2009 edited by P. A. Miglus & S. Mühl, Heidelberger Studien zum Alten Orient, Band 14, 2011, pp. 209-215.
20. Machinist P. B., The Epic of Tukulti-Ninurta I: a study in Middle Assyrian literature, Yale University, unpublished PhD Dissertation, 1978.
21. Machinist P., Literature as Politics: The Tukulti-Ninurta Epic and the Bible // Catholic Biblical Quarterly, Vol. 38,№ 4, 1976, pp. 455-482.
22. Munn-Rankin J. M., Assyrian Military Power 1300-1200 B.C. // The Cambridge Ancient History, vo. II, part. 2, Cambridge, 1975, pp. 274-306.
23. Potts D. T., The Archaeology of Elam. Formation and Transformation of an Ancient Iranian State, Cambridge University Press, Cambridge, 1999.
24. Sazonov V., Die mittalassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukūltī-Ninūrtas I (1242-1206) // in Identites and Societies in the Ancient East-Mediterranean Regions, Ed. by T. R. Kämmerer, Alter Orient und Altes Testament, 2011, Band 390/1, S. 235-276.
25. Streck M. P., Tukultī-Ninurta I //Realexkion der Assyriologie und Vorderasiatischen Archäologie,Band 14, 1/2-3/4, 2014, Berlin-Boston, pp. 176-178.
26. Wilhelm G., Boese J. 1987, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderts v. Chr. In: P. Åström (ed.), High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology held at the University of Gothenburg 20th-22nd August 1987, Part 1, Gothenburg, 74-117.
27. YamadaS., Tukulti-Ninurta I's Rule over Babylonia and Its Aftermath // Orient, № 38, 2003, Tokyo, pp. 153-177.

Война Тукулти-Нинурта I против Вавилонии

Руслан Цаканян

Резюме

Ключевые слова: *Ассирия, Ашшур, Вавилония, Вавилон, Каштилиаш IV, Кардуниаш, Аккад, Месопотамия*

Одним из ключевых эпизодов политической истории Месопотамии XIII века до н.э. была война ассирийского царя Тукульти-Нинурта I (1244-1208 гг. до н.э.) против царя Вавилона Каштилиаша IV (1232-1225 гг. до н.э.). Эти эпизоды отражены в ассирийских царских надписях, административных материалах, ассирийско-вавилонских хрониках и других местах. Отношения между двумя родственными народами, Ассирией и Вавилонией, принадлежащими к одному лингвистическому и культурному пространству, никогда не были урегулированы во время существования двух государств. Несмотря на то, что Вавилон уже культурно поглотил Ассирию, его политический успех был переменным. В XIII веке до н.э. «*вавилонской проблеме*» было отведено большое место в концепции ассирийской внешней политики, урегулирование которой ознаменовалось спадом царящей в Вавилонии касситской династии. Но покорить Вавилонию с ходу удалось, и ассирийский царь Тукулти-Нинурта I (1244-1208 гг. до н.э.) был вынужден совершить еще несколько походов в Вавилонию.

The War of Tukulti-Ninurta I against Babylonia

Ruslan Tsakanyan

Summary

Key words: *Assyria, Ashur, Babylonia, Babylon, Kashtiliash IV, Karduniash, Akkad, Mesopotamia*

One of the key episodes in the political history of Mesopotamia of the XIII century BC was the war of the Assyrian king Tukulti-Ninurta I (1244-1208 BC) against the king of Babylon Kashtiliash IV (1232-12025 BC). These episodes are reflected in Assyrian royal inscriptions, administrative materials, Assyrian-Babylonian chronicles and other places. Relations between two related peoples: Assyria and Babylonia, belonging to the same linguistic and cultural space, have never been settled during the existence of the two states. Despite the fact that Babylon had already culturally absorbed Assyria, its political success was variable. In the XIII century BC, the "*Babylonian question*" was vital in the concept of Assyrian foreign policy, the settlement of which was marked by the decline of the Kassite dynasty reigning in Babylonia. But it was not possible to easily conquer Babylon, and the Assyrian king Tukulti-Ninurta I (1244-1208 BC) was forced to make more attempts to conquer Babylon.

Ներկայացվել է 03.09.2021 թ.
Գրախոսվել է 10.09.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.